զակալ Շուրլաձէի հետ՝ բանի էութիւնը հասկանալու և հրացանաձգութեան վերջ տալու համար: Տեղ. Շուրլաձէի երևալով՝ հրացանաձգութիւնը վերջ է գտնում: Պարզուեց, որ պահակային հարիւրեակի զինուորները և Ուզունլարի բնակիչները հրացանաձգութեան են բռնուել, որի ժամանակ սպանուել է Ուզունլարի պահակը և վիրաւորուել է ձին, այլ և զինուորների ձեռքից սաստիկ ծեծ կերել գիւղի կոմխարը... Երևում է, որ զինուորները յանցաւոր են եղել, բայց գիւղացիների յանդուգն քայլը և զինուած շղթաներով յարձակուելը առիթ է տալիս մտածելու, որ գիւղում շատ զէնք կայ: Անհրաժեշտ է խիստ խուզարկութիւն անել գիւղի բոլոր տներում և միևնոյն ժամանակ հարկաւոր է վռնտել այստեղի երկու հարիւրեակները և փոխարինել ուրիշ զօրամասերով, որովհետև զինուորները սաստիկ երես են առած և թալանների յուզում են տեղական բնակչութիւնը»:

Երբ ուզունլարցիները ներկայացուցիչներ ուղարկեցին Սանահին՝ բողոքելու համար զինուորների գործած չահատակութիւնների դէմ, զօր. Ցուլուկիձէն ձերբակալեց նրանց և Ուզունլար պատժիչ զօրամաս ուղարկեց՝ զնդացիրներով ու թնդանօթներով: Դեկտ. 8-ին այս զօրամասը ճանապարհ ընկաւ մի զրահապատի ուղեկցութեամբ: Ուզունլարցիները դիմաւորեցին հրացաններով: «Զրահապատից, տեղեկագրում էր նրա պետ Խունչիան, պատասխանեցինք թնդանօթներով ու զնդացիրներով: Մեր հետևակները չկարողացան բարձրանալ սարը և նահանջեցին թողնելով մի զնդացիր: Մեր հետևակները շատ վնասուեցին: Հայերը մեծ քարեր էին նետում կայարանի վրա, որի հետևանքով պայթեցրին ռազմամթերքով բեռնաւորուած երեք թիւրքական վագոններ: Կայարանը ջարդուած է»: Իսկ վրաց հաղորդակցութեան նախարարութիւնը դեկտ. 9-ին հաղորդեց, թէ՝ «Դեկտ. 9-ին, Սանահնի մօտի կռիւներում, վրացիներից սպանուել են 3 հոգի, ծանր վիրաւորուել՝ 1, թեթև վիրաւորուել՝ 1, անհետ կորել՝ 2: Արձակուած է 3,600 զնդակ»:

Երկու օր յետոյ, դեկտ. 11-ին, Գոդուաձէն զեկուցանում էր զինուորական նախարարին. «Այսօր, վաղ առաւօտեան, Ալլահվերդի և Սանահին կայարանների միջև, 102րդ վերստի վրա, ուղին քանդուած է հայերի ձեռքով: № 3 զրահապատը թնդանօթաձգութիւն ունեցաւ: Ես կարգադրել եմ նորոգել ճանապարհը»:

Վրացիներն ամբողջ երկու օր թնդանօթի բռնեցին Ուզունլար գիւղը: Դեկտ. 10-ին Ուզունլարի ներկայացուցիչներ Տաղեանն ու Ղարաքեշիշեանը հետևեալ աղերսալի հեռագիրը տուին Երևան, զինուորական նախարարին. «Իմացնում ենք, որ դեկտ. 8-ին վրաց զօրքերը ուզեցին գրաւել Ուզունլար գիւղը: Միջոց չունէինք նրանց տեղաւորելու, և հասարակութիւնը մերժեց ընդունել: Զօրքերը վճռեցին գրաւել ուժով: Երկու օր է Ուզունլարը գտնուում է թնդանօթների կրակի տակ: Վրացիները սպառնում են կոտորել ուզունլարցիներին: Հաղար տուն ենք և խնդրում ենք անել չտալ կարգադրութիւն՝ օգնութիւն հասցնելու կորչող ժողովրդին»:

Հայաստանի կառավարութիւնը, որ ահագին նիւթ ունէր Լոռիի ծանր կացութեան մասին, նոյն օրն և եթ, արտաքին գործոց նախարար Ս. Տիգրանեանի ստորագրութեամբ Թիֆլիս ուղարկեց հետևեալ հեռագիր-բողոքը. «Ղարաքիլիսա—Լոռիի զօրամասի պետը հաղորդում է, որ ուզունլարցիները երկրորդ օրն է գտնուում են վրաց զօրքերի թնդանօթային և զնդացիրային կրակի տակ, որ Լոռիի հիւսիսային մասի հայկական գիւղերը մատնուում են թալանի ու բռնութիւնների նոյն զօրքերի կողմից: Հայաստանի կառավա-